

ԴՐՈՒ. ՑԱՆՈՒՅԿԵՎԻՀ

ԴՆՇՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈԳՆԵԼ
ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԾՆՆԴԱ-
ԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

619
34-35

ԳԵՏԳՐԱՍ 1933 ՅԵՐԵՎԱՆ

30 JUL 2010

619

34-35

ՄՊ'

ԳՐՈՒ. ՑԱՆՈՒՅԻՆԵՎԻՀ

1010
42745

Ի Ն Չ Պ Ե Ս Պ Ե Տ Ե Ո Գ Ն Ե Լ
Ա Ն Ա Ս Ս Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Ն Ծ Ա Ն Դ Ա-
Բ Ե Ր Ո Ւ Թ Ձ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

9446



Գ Ե Տ Ա Ր Ա Ս 1 9 3 3 Յ Ե Ր Ե Վ Ա Ն

09 JUL 0
09 JUL 2013

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՈԳՆԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԾՆՆԴԱԲԵ- ՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ԾՈՐՈՒՄ

Ծորման ժամանակ եղ անտառներն անհան-
դիստ են լինում և գրգռված, արուներ են վորո-
նում, իրար վրա լին ցտտկում, կովերը բառաչում
են, ուտելու ախոքժակը կորցնում։ Սկսում են
շուտ շուտ, բայց քիչ միզել։ Արտաքին սեռական
գործարաններում առաջանում են փոփոխություն-
ներ։ Սեռական ճեղքից դուրս ե ծորում թանձր,
լորձանման, լերբեմն (մատղաշ եգերի մոտ) արլու-
նախառն հեղուկ։ Սեռական ճեղքը ժամանակ առ
ժամանակ բացվում ե, վորի ժամանակ յերկում
ե սաստիկ կարմրած և ուռած լորձաթաղանթը։
Կտթի վորակը փոխվում ե, վորոշ չափով պա-
կասում ե նրա լուղալիության տոկոսը, հեշտ ե
մտկարդվում և յերբեմն ել ձագի վրա վնասակար
ազդեցություն գործող հատկություն ե ստանում՝
առաջացնելով փորլուծ։

Տեխն. խմբագիր՝ Գ. Զենյան
Լեզվ. խմբագիր՝ Հ. Գևորգյան
Թարգմ. Հ. Միրզյան
Արքագրիչ՝ Հ. Սառիկյան
Գառնվեր № 615 Գլուխիս № 8087 (բ)
Հրատ. № 2515 Տիրած 2.000
Պատուի տպարան

Հանձնված է արտադրության 5 մարտի 1933 թ.
Ստորագրված է տպագրիկ 30 մարտի 1933 թ.

Մենդաբնը ուժունից հետո ձիերի ծորման նշանները նկատվում են 5—9 որ անց: Յեթե ալդ միջոցին բեղմնավորում տեղի չի ունեցել, ծորումը նորից ե կրկնվում 3—4 շաբաթ հետո: Ցեղալուրավոր անասունների ծորումը յերևում ե 3—4 շաբաթից հետո և, յեթե չեն բեղմնավորվել, կրկնվում ե նորից՝ մի ալդքան ժամանակ անցնելուց հետո: Խոզերի ծորումը ե գոճիներին ծծից կտրելուց մի 3 որ անցած և յեթե չի բեղմնավորվել, ծորումը կրկնվում ե 9—12 որ անց:

ՀՂՈՒԹՅՈՒՆ

Հղության ամենից վաղ և տուաջին նշանն այն է, վոր անասունի վարմունքը փոխվում ե: Հոսման ժամանակ տուաջ լեկած զրդումած զրությունն անցնում ե: Հղի անասունի ախորժակը հետազհետե ավելանում ե, վորովհետև ստացած սնունդի մի մասը նու պետք է տա սաղմին: Բանի դեռ սաղմը փոքը ե, սննդարար հյութերի ալդ ծախսումն ախքան ել զգալի կերպով չի տնդրադառնում մոր վրա, բայց հղության յեկրորդ կիսից սկսած, մինչեւ վերջը մոր արգանդում աճող ստղմն ավելի և ավելի մեծ քանակությամբ մննդարար նկատեր ե պահտնջում: Հենց ալդ պատճառով ել մոր սննդառության մեջ նկատելի խանգարում է տու-

ջանում՝ թե նրա ամբողջ մարմնի և թե մարմնի մի քանի տուանձին մասերի վերաբերլար:

Ախպես, որինակ հղության ամեն մի շըջանում կովերի լեղջուրները դանդաղ են աճում, այնինչ վոչ հղի ժամանակ, լերբ սննդարար նյութերի բաշխումը մարմնի մեջ ընթանում ե սովորական կարգով, լեղջուրներն ելնորմալ կերպով են աճում: Ցեղալուրների աճման այս փոփոխության հետևանքով լեղջուրների վրա տուաջ են գալիս ողակներ, վորոնց թվով կարելի կլինի հաշվել և իմանալ, թե անասունը քանի անդամ ե հղացել:

Հղության լերկրորդ շըջանում դավակն արգանդում ախքան և մեծացած լինում, վոր անդրադառնում ե մոր փարի ծավալի մեծանալու վրա, մասնավոր հղության վերջին: Այս նշանն ավելի նկատելի կլինի, լեթե կամնդնենք հղի կենդանու հետևի կողմը և ախպես նայենք: կտեսնենք, վոր փորի աջ կողմը շատ տվելի լե մեծացած լինում, վորով հետև գտնածակը (թափանը) – ստամոքսի ամենամեծ բաժանմունքը, վորը գանվում է փորի խոռոչի ձախ կիսում, գեալի աջ և հրում հղացած արգանդը: Իսկ ձիերի մոտ՝ կուլը և համը աղիքներն արգանդը հրում են մի քիչ գեալի ձախ:

Հղության ավելի վատահելի նշանը պետք է համարել զավակի շարժվելը (խաղալը), վոր ավելի նկատելի լե դասնում յերկրորդ կիսում: Այդ խա-

Դալն ավելի պարզ վորոշելու համար պետք ե
անսասունին զննել քաղցած ժամանակ (անոթի
փորին), նախապես մի քիչ ստոր ջուր խմցնելով։
Յեթե նախելու լինենք փորի այն կողմը, վոր կողմը
գտնվում ե զավակը, (կովերի աջ և ձիերի ձախ
կողմերը), կարող ենք նկատել փորի հանկարծակի
ցնցումները (շարժվելը): Կարելի լի զավակի
ներկայությունն ստուգել նաև շոշափելով, դրա
համար ձեռքով թեթեվակի կարվածենք փորի
պատին և ձեռքը կթողնենք նրա վրա, իսկուն
կզանք ներսից զավակի տված պատասխան
հարվածը։ Անտառնի փորի մեծանալուն ու
հետագայում կտի ընկնելու հետ միաժամանակ
քաղցակոսիկը (վերջին կողի և զատազլիք
(մոկոկի) միջև ընկած տարածությունը) հղի
անտառների մոտ ավելի սուր կերպով ե
արտահայտվում։

Հղության վերջին շրջանում (ձնելուց 2—4
շաբաթ տուաջ) պոչարմատի մոտ „փոսեր,, են
գուանում (մանավանդ կովերի), վոր հետեանք և
կոնքի կապերի թուլանալուն։ Մեռական արտա-
քին գործարաններն ուռչում են և սեռական ճեղ-
քից լորձունք ե զալիս, վոր կեղտոտում ե անտ-
սունի պոչը։ Դրա հետ միասին սկսում են
ուռչել նաև ձեռքը։

Նախապես ծին ունեցածների մօտ ալդ ավելի վաղ

ե տեղի ունենում, մոտ $1 - 1\frac{1}{2}$ տմիս տուաջ,
իսկ դեռ ծին չունեցողներինը՝ մի քիչ ուշ, ձնե-
լուց մի շաբաթ առաջ։ Շոշափելիս նկատվում
է, վոր ձեռքը պնդացել են, սրանց կաշին ձգվում
ե, պտուխները հաստացած են և լերկարացած։
Պտուխները սեղմելով քաշելիս՝ միջից դուրս ե
զալիս զեղնավուն հեղուկ, վոր հղության վեր-
ջերին արդեն նման ե իսկական կաթի։

Բայց հղության մեր այս թված նշաններից,
կան նաև այնպիսի նշաններ, վոր կարելի լի
իմանալ միայն անտառնին ներքին հետազո-
տության լենթարկելով, այն ե՝ ուղիղ աղիքի և
հեշտոցի միջով, բայց ալդ կերպ իմանալը մաս-
նագետներին և միայն մտաշելի, իսկ գործին
անգիտակ մարդկանց խորհուրդ չի արվում կա-
տարելու, վնասավածքներից խռուտափելու և նույ-
նիսկ վիժում առաջ չըերելու համար (հեշտոցի
միջոցով հետազոտելիս):

Մեր այս ասածներից հետեւմ ե, վոր անտառն-
ների հղությունը նշանների միջոցով վորոշելը
բավականի դժվար ե հղության առաջին շրջանում։
Այս ինչ, գլուղացու համար շատ անգամ չափո-
ղանց կտրեսը ե իմանալ, թե իր կենդանին հղի լի,
թե վոչ Յեվ իթե հղի լի, լերը ե սպասվում
ծինը, վորպեսզի իր ժամանակին ծնող անտառնին
կարողանա բարենպաստ պայմանների մեջ զնել,

Ճննդաբերությունը կանոնավոր ընթանալու համար:

Այդ դեպքում առաջարկվում ե գրանցել զուգավորումները և մանավանդ այն ժամանակը, իերք եղ անտառնը չի թույլ տալիս արուին մոտենալ՝ կը կին անգամ զուգավորվելու: Այսպիսի գրանցում կատարելը դժվար չե, յերբ զուգավորումը կատարվում ե առձեռն (մարդու ողնությունը), իսկ արոտային կամ ազատ զուգավորման դեպքում ժամանակին հետեւյն ու իմանալին անհնարին ե: Այդ դեպքում մնում ե դիտել և գրել, թե յերբ ե գաղաքել յերկրող ծորումը, վորի յերեալու ժամանակի մասին տաել ենք:

Հղության միջին տեղողությունը՝

Զամբիկինը (մատակ ձի) 340 որ (11 ամիս և մի քառի որ):

Կովինը 285 որ (9 ամիս և մի քանի որ):

Վոչխարինն ու այծինը 154 որ (5 ամիս և միքանի որ):

Խոզինը 120 որ (4 ամիս):

Շանը 63 որ (2 ամիս 3 որ):

ՀՂԻ ԱՆԱՍՈՒՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Հղի անտառնը վոչ միան իը կերի մասին և հոգում, այլև իը զավակի, վորին կրում ե իը արդանգում: Դրա համար ել տմենից առաջ անհրաժեշտ ե նրան լավ և կանոնավոր կերակրել:

Վատորուկ և անբավարար կերն անպայման կանգրադառնա ապագա մտտադ անտառունի առողջության և մարմնի կազմության վրա: Նա տրամադրված կլինի ամեն տեսակ հիվանդություններով բոնվելու, կդադարի նրա մարմնի, աճումը, թուկակաղմ և ստկավարդունավետ կլինի:

Յերբ տրոտը գտնվում ե ճահճուտ տեղերում, յերբ վորպես կեր արվում ե անձրևալին ամռանը հնձած խոտ, կամ ստիպված միայն դարձման են տալիս ուտելու, պետք ե նկատի ռանենալ, վոր հղի կովն արդպիսի կերից չի կարող ստանալ իրեն անհրաժեշտ քանտեկությամբ կեր, վոր պահանջվում ե զավակի կմախքն ամբազնդվելու համար: Յեթե իր ժամանակին միջոցներ ձեռք չտունվեն, զավակը վախտ կծնվի, լով չի աճի ու մեծանա, ամրամտըին և ուժեղ չի լինի, վորները բարակ և շատ անգամ նույնիսկ ծուռը կլինեն:

Կրալին մասերով աղքատ կերերին արհեստակտն կերպով կրացնի աղեր (ֆոսֆորա—թթվային կեր) ավելացնելը բարենպատ աղդեցություն կունենա զավակի զարգացման վրա:

Այն բոլոր կերերը, վորոնք ընդունակ են ստոմաքում շուտ խմորվելու, ինչպես կանաչ յերեքնուկը, գոնգեղը (ապիկո խոտը), եսպարցեալը (իշառվույտը), առվուտը և ալին, շատ հաճախ միժման պատճառ են զառնում: Այդպիսի վնա-

ստկար ազդեցություն են ունենում նաև յեղամով ծածկված, մըսած կամ ցուրտը տարած կերերը, կարտոֆիլի ծլած ու փտած պալարները, բորբոքնած դարմանն ու խուզը: Վնասակար են նաև ձյան և ընդհանրապես սառը ջուր խմեցնելը:

Բայց միտին կանոնավոր կերակրելով չի սահմանափակվում հղի անասունի խնամքը. Նրա պահպանումն ու աշխատանքի համար ոգտագործումը նույնպես խոշոր ազդեցություն ունի հղւ. թլան կանոնավոր ընթացքի հետագա ծննդաբերության, ապագա զավակի ու մոր առողջության վրա:

Հղի անասունին պահելու համար պահանջվում է մաքուը շենք առատ, ամեն որ փոխվող, մաքուը ցամքար, մանավանդ ձմեռվա ցուրտ որերին, վորպեսզի անասունը սառը հատակին չալառի և այդ պատճառով չփիժի: Հարկավոր են նաև մաքուը ու թարմ ող: Պետք են խուսափել հղի անասունին շատ թեք հատակի վրա կանգնեցնելուց, վորովհետև այդ կտրամադրի վիժելու: Վերջապես անասունին պետք են արտամադրվի աղատ և ընդարձակ տեղ, վորպեսզի հարևան անասունները չխփեն և հարգած չտան նրան:

Ինչ վերաբերում են աշխատացնելուն, պետք են տեսել, վոր չտփափոր աշխատանքը վոչ միտին

չի վնասում, այլ և ոգուտ ե հղի անասունի համար, միայն թե ծնելուց մի 2-3 շաբաթ առաջ պետք ե ազտոել տմեն տեսակի աշխատանքներից և թողնել, վոր ամեն որ տղատ մտն գո:

ՀՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԿԱՏՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հղի անասուններին. կանոնավոր կերպով կերակրելու, խնամելու և աշխատեցնելու պարմանների խախտումը վատ ե անդրագառնում վոչ միտին նրա ապագա վորակի վրա, այլ և առաջ ե բերում զանտպան հիվանդություններ, և ամենից հաճախ վիժում և վաղաժամ ծննդաբերություն, պառկելախտ և հեշտոցի դուրս ընկնելը:

Վիժում

Զավակի՝ ժամանակից շուտ, որտապակաս և ապրելու անընդունակ լինձակում ծնվելը կոչվում է վիժում:

Ցեթե ծննդաբերությունը տեղի է ունենում թեկուզ ժամանակը լրանալուց մի քիչ վաղ, բայց զավակին արդեն այնքան ե զարգացած լինում, վոր կարող ե ապրել, այդպիսի ծննդաբերությունը կոչվում ե վաղաժամ:

Վիժման պատճառը զվարապես լինում էն զանազան մեխանիկական վնասվածքները և չտփագանց լարվածությունը, փորին հասցրած հարվածները, վար ընկնելը, թռչողական ծանր բեռներ կրելը, ծանր, վատ կաշուն ճանապարհով լերկար աշխատելը, լերդաթուղով լերկարտոն ճանապարհ գնալը, նույնպես անկանոն կերակրելը փքացնող կերերը (կանաչ լերերնուկ, եռպարցետ, վիկո և ալին), լեղամով ծածկված կերերը, մեծ քանակությամբ սառը ջուր խմելը նաև մի քանի գեղրարար (զլուրը — спорынիա, ուժեղ ներգործող լուծողականներ): Սաստիկ վնասում են նաև ջերմ տռաջացնող հիվանդությունները և ծննդաբերության անցքերի հիվանդությունները Վերջապես վնասում են նաև հղի անտառներին հեշտոցի միջոցով կոռիտ կերպով և անհմուտաբար հետագութելը:

Վիժումը կարող է տեղի ունենալ հղության բոլոր շրջաններում. բայց ամենից լաճախ տեղի լի ունենում կովերինը մոտ 7-դ ամսում, իսկ ձիերինը՝ 3—8-րդ և 10-րդ ամիսներում, հղության սկզբի շրջանում վիժումը հեշտ և արագ է տեղի ունենում, իսկ հղության լերկրորդ շրջանում հգ անտառնը շատ դժվար է տանում այդ, և հիվանդության վերահսկության ամելի անկանում: ախորժական բացակայությունը, շուտ—

շուտ միզելը, ամոֆուլքի ճեղքից թարախուտ, ալրունախառն լորձի հոսելը, վոր կեղտոտում ե պոչը և նքոցները: Ձեռքով հեղտոցի միջոցով հետազոտելով, կարելի լի նկատել զավակատան բացված պարանոցը և շոշափել սաղմբ շըշտպատող պատյանը:

Մի անգամ, մանավանդ հղության լերկորդ կիսին, վիժում ունեցած անասունը սսվորաբար հտկում ե ունենում կրկին անգամ վիժելու կամ կարող ե լերկար կամ կարճ ժամանակով ամուլ (չըեր) մնալ:

Բացի մեր նկարագրած պատահական վիժումներից, լինում են նաև վարակիչ վիժումներ: Ալդպիսի վիժումներ պատահում են, լերբ հղի անասունը գտնում ե վարակված հոտում և վարակն այս կամ այն կերպ անցնում է հղի անասունի ծննդաբերական անցքը, վարակման պատճառով վիժումը նկատվում է մեծ թվով անասունների մեջ և համեմատաբար շատ կարճ ժամանակամիջոցում: Վարտիկիչ վիժում լերելուն պես պետք ե անհապաղ հայտնել անասունաբուժին, վորպեսզի կարելի լինի կանխել այդ հիվանդության տարածվելը:

Պատահում, ե վոր հղի անասունները, ավելի հաճախ կովերը, մինչև ծննդաբերությունը պատկում են (պառկելախտ): Սրա ելությունն այն

ե, վոր անտառունը ծնելուց մի քանի որ, յերբեմն ել մի քանի շաբաթ (4—8) առաջ զգում և հետըզհետե սաստկացող թուլություն մարմնի հետևի մասերում և վոտքերում վերջապես այդ հիվանդագին դրությունն այնքան եւ ուժեղանում, վոր անտառունն այնու անկարող եւ լինութ տեղիցը վեր կենալ, մինչև վոր ծնում ե:

Ծննդաբերությունից տուած պառկելը նկատվում ե պառագ կամ վաս կերակուած կովերի մեջ, նաև յերբեմն ջուխտակ (յերկվորյակ), կամ չափազանց մեծ հորթ ունենալու ժամանակ:

Այս հիվանդության դեպքում ողնությունը հետեւալը պետք է լինի. պետք ե պատշաճ ինսամք տանել տուատ և փափուկ ցամքար տալ, ժամանակ առ ժամանակ անտառունին մի կողմից մլուս կողքը դարձնել, վորպեսզի յերկար պառկելուց վերքեր (պառկելախող) չառաջանան և աննդարար դրութամարս կերեր տար: Յեթե կովը պառկել ե ծնելուց 5—6 շաբաթ առաջ, հետեւանքը կարող ե աննպաստ լինել:

Հեշտոցի դուրս ընկնելը շատ անդամ տեղի յե ունենում հզության վերջին և տանենից շատ այն կովերի մոտ, վորոնք պահվել են բացտռապես գոմերում, շատ են ծին ունեցել, պառագ են և թուլը: Հեշտոցի դուրս ընկնելը սովորաբար տեղի յե ունենում անտառի պառկելու ժամանակ,

յեզր սեռական ճեղքից դուրս ե ընկնում կարմիր գունի ուռուցք, վորը վերկենալիս անհետանում ե: Ծնելուց հետո հեշտոցը դուրս չի ընկնում:

Անտառունն ոգնության կարիք չի զգում, յեթե հեշտոցի դուրս ընկած մտար մեծ չի (բռունցքի մեծության) և չի տպդում հզի անտառունի արամտողության վրա: Իսկ յեթե այդ ուռուցքն ընդունում ե մեծ չտփեր և զրգում ե անտառունին՝ տուած ըերեւով նքոց, այդ դեպքում անհրաժեշտ ե ուղղել հեշտոցի դուրս ընկած մտար և, վորպեսզի կոկին անգամ դուրս չգտ տեղից, ամոթութիւն ճեղքը 2—3 տեղից կարել (այդ ժամանակեաը պիտի անի): Կարը ծննդաբերությունից տուած պետք ե քանդել:

ԿԱՆՈՆԱՎՈՐ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ճղության ժամանակիը լրանալուց հետո ծննդաբերությունը. այսինքն բոլորովին ժամանակը լրացած և ապրելու ընդունակ զտվակի՝ զտվակատանից կամ արգանցից դուրս գալը որտ մկանալին պատերի կծկումների չնորհիվ, վորին ոգնում են նաև փորի պատերի կծկումները:

Ծննդաբերության այդ առօջին արտաքին նշանները կոչվում են յերկունք (ցալ): Ծննդաբերության ընթացքում յերկունքն անընդհատ չի տեղի ունինում, այլ ընդմիջումներով. ծննդա-

բերության սկզբին ուղղ ընդմիջումները բավական առօղական են, իսկ վերջում դառնում են ավելի ու ավելի կարճատե, շաւա շուտ են կրկնվում և դափակատան կծկման ուժը շարունակ ամբելանում ե:

Ծննդաբերությունը կարելի է բաժանել 3 շըրջանի առաջին կամ արագես կոչված նտխապատրաստական շըրջան՝ լերկունքը դեռ թուլլ և դիտողի համար հափարյա անկարելի իե, անսառնը ցուց ե տալիս թեթև անհանգստություն, կանգնած միջոցին վոռները փոփոխում ե, նույում ե իր փորին. Անոտական արտաքին գործարանները սաստիկ ուռչում են, սեռական ճեղքից գալիս ե լորձունք և մուգ կեղտոտ թելի պես կախ ե ընկնում, Աճուկները (փորտակ) և գոտակատեղին կտի են ընկնում:

Խոզերն այդ շըրջանում իրանց ապագա սերնդի համար բուն են վորոնում և սարքում:

Այս շըրջանից հետո, վոր սովորաբար հեշտությամբ կարելի յե չնկատել, վրա յե հասնում լերկորդ կամ զափակատան պարանոցի բացման շըրջանը. Կենդանու բնափորության փոխվելի ալժմ ավելի շատ ե տչքի ընկնում. անսառնը, լերկունքի ուժեղ ցավերի հետևանքով, սաստիկ անհանգստանում ե մեկ պառկում ե, մեկ վեր կենում, հաճախ նալում ե փորին, պոչը թափ ե տալիս կղկղանքի

և մեղի արտաթորումը հաճախակի յե դառնում այս շըրջանի հաճախակի և ուժեղ լերկունքից, սաղմը շըրջապատող պատյանը դուրս ե գալիս զափակատան պարանոցից և սեպի նման այնքան ե նրան լախացնում, վոր զափակատունն ու հեշտոցը կարծես դառնում են մի ընդհանուր անցք: Կանոնակոր ընթացող ծննդաբերության ժամանակ, զափակատան պարանոցի տաղ լրիվ լախանալը պետք ե տեղի ունենած մինչև սաղմը շըրջապատող պատյանի պատովելը: Իսկ լեթե, ինչպես պատահում ե լերբեմն, պատյանն ավելի շուտ ե պատռվում ինքնիբան կարմ գոծին վոչ հմաւու ոգնականների կողմից՝ արհեստական կերպով, անդ դեպքում զափակատան պարանոցի անցքի լրիվ լախացում կարող ե տեղ չունենալ և ծննդաբերությունը կլինի ծանր, լերկարտան և լերբեմն ել անկանոն:

Ծննդաբերության լերբորդ շըրջանում սաղմը շըրջապատող պատյանը շարժվում ե առաջ, իր մեջ լեղած սաղմը, հեշտոցից գեպի նախագուռը և ապա սեռական ճեղքի անցքը: Ցերկունքն այժմ ավելի ե սաստիկանում և նրա ուժից պատըռվում ե սաղմը շըրջապատող զալատյանը և սկըսում են դուրս գալ սաղմնային ջրերը, վորից հետո լերեռում ե զալատիր: Զալատիր գիտի անցնելը ծննդկանի համար ամենածանր մոմենտն ե, այդ

Ժամանակ նա սաստիկ տնքում ե և յերբեմն ել
այսպես ե ուժասպառ լինում, վոր յերկունքը
դադարում ե և ծննդաբերությունն ավարտելու
համար պահանջվում ե բժշկի օիջամտությունը:
Անասունի իրանը հեշտությամբ և արագ ե անց-
նում սեռական անցքից:

Կովերի ծննդաբերությունը սովորաբար տևում
ե 2—3 ժամ, յերբեմն ել 6 ժամ և շատ քիչ
անգամ վերջանում ե $\frac{1}{2}$ ժամվա ընթացքում:
Զիերի ծննդաբերությունը, նրանց կոնքի ավելի
լայն լինելու շնորհիվ, ավելի արագ ե կատար-
վում:

Խոզերինը տևում ե 2—3 ժամ Ընդհանրապես
առաջին անգամ ծնող անասունների ծննդաբե-
րությունը ծանր ու յերկարատև է լինում, քան
շատ ծին ունեցող անասուններինը:

Մինչև ծննդաբերության սկիզբը, յերբ սաղմնա-
լին ջրերը գեռ չեն դուրս հոսել, զավտեն ար-
գանդում այսպիսի դիրք ե ընդունում, վոր նրա
մեջքն ուղղված ե լինում զեղի ցած, մոր փոքի
պատի կողմը, և վոտները ծալված են լինում:
Սաղմնալին ջրերը հոսելիս, զավտկատան մկա-
նալին պատերի կողմից սեղմվելով, սաղմն իր
դիրքը փոխում ե, կիսաշրջան ե կատարում իր
առանցքի վրա՝ ըստ յերկարության, ուղղվում ե և
արագիսով աշխատըն ե գալիս՝ կամ դլուխն առաջ

ուղղած, վորի ժամանակ գլուխը դրված ե լինում
առջևի վոտների վրա (գլխի դիրքով), կամ հետեւի
վոտները պարզած (կոնքալին դեպքում). Թե
այս և թե մյուս դիրքը նկատվում ե կանոնավոր
(նորմալ) ծննդաբերության ժամանակ: Սովորա-
բար այն դեպքերում, յերբ մալրը կտնոնավոր
խնամք ե վատելել, կանոնավոր կերակրվել ու
պահվել, խելացիորեն ե ոգտագործվել, կանոնա-
վոր ծննդաբերության ժամանակ մարդու ոգնու-
թյան կարիք չի զգում, վորովհետև բնությունն
այս դեպքում չի զրկել անասունին այն ուժից,
վոր հատուկ ե նրան, չի զրկել նրան բոլոր որ-
գանների նորմալ գրությունից և արագիսով հնա-
րատվորություն ե առնել կենդանուն՝ ծանր յեր-
կունքից ազտափելու:

Իսկ չափազանց ջահել կամ պտուավ և շատ նեղ
կրնք ունեցող, մալրերը կամ ուժից վեր աշ-
խատանքից ուժասպառ յեղած մալրերի վատ
կերակրվելուց, ծննդաբերությունը շատ ծանր ե
լինում և գրա վրա ախքան են սպառում իրանց
ուժերը, վոր կտրիք են զգում կողմնակի ոգնու-
թյան, մանափանդ զավակի գլուխն անցնելու
ժամանակ, կենդանու ծննդաբերությունն շտա-
պեցնելու և դրանով ուժերի չափազանց վատնումը
կանխելու համար, իսկ կոնքալին դիրքի զեղքում
նաև զավակի խեղդամահ լինելը կանխելու համար:

Կանոնավոր ծննդաբերության ժամանակ ոգությունն այն ե լինում, վոր մանկաբարձը բրոնում ե զավակի վոտքերից և դուրս ե քաշում նրան (անպարհան լերկունքի ցավերի նոպայի ժամանակ), խուսափելով բուռն շարժումներ անելուց և ընդհանրապես կոպիտ բռնությունից:

Ուղղակի ձեռքով զավակին դուրս հանելն անհնարին լինելու զեպքում դիմում են հանդուլցի (կապի) օգնության, վոր պամբաստում են ամուր լերիցից կտմ պարանից: Կապը զցում են զավակի վոտքերին, դաստակից կամ առջեի ծնկից վերև և կամ հետևի ծնկից վերև, լեթե զավակը ծնվում ե կոնքացին դիրքով:

Մի քանի դեպքերում անհրաժեշտ ե լինում կապը զցել գլխին: Այս դեպքում ել պետք ե նկատի ունենալ, մոր զավակին խեղդելուց խուսափելու համար կապը պետք ե զցել ծոծրակին, բռնելով միան մի ականջը, վորակեսդի կապը սահելով չնկնի պարանոցին:

Ոգնություն հասցնելու գործողությունից առաջ անհրաժեշտ ե ձեռները շտամքուր լվանալ ջրով և ստպոնով և ապտ ոծել վաղելինով, կամ անալի խողաճարպով (ներքին), կամ կովի կարագով: Յեղունգները պետք ե շտամքը կտրած լինեն: Յերիզը (կամ պարանը) նախապես պետք ե 5—10 ըոպե լեփ տուլ և նույնպես ոծել ճարպով կամ վաղելինով:

Նոխազգաւշական այս միջոցները չափազանց կարևոր են և կիրառվում են մորը և զավակին վարակելուց խուսափելու նպատակով, վորով: Իետև ծննդաբերության ժամանակ սեռական գործարանները և մանավանդ զտվակատունը ներկայացնում են մի միապայի վիրալի մակերես, վորի միջոցով շտամքությամբ կարող են ձեռքով, կամ զործիքներով այստեղ բերած վարկներն անցնել արյան մեջ:

Շատ դեպքում զավակը ծնվում է առանց այն պատրանների, վորոնց մեջ նա լեղել ե արգանգում լեղած ժամանակ և միար պարտի լարն ե կտապում դեռ զավակին ընկերքի հետա: Այդ կապը կտրվում ե խսկույն և եթ ծնվելուց հետո՝ պառկած դրությամբ ծնող խոշոր մանասունների (ձի, կրվ) պորտալարի կտրվելը տեղի ե ունենում ծննդկանի վոտքի կանգնելու պահին, իսկ մանր անասունները (խոզը, շունը) ճարպկորեն կտրում են իրենց պորտալարը՝ կրծելով:

Յերբ այս կամ այն պատճառով պորտալարը չի կտրվում (որինակ՝ ծննդկանը ծնելուց հետո վոտքի չի կանգնում), ուրեմն հարկավոր ե ոգնության հասնել և այսպես անել — զավակի փորից մի թիզ վերև պորտալարը մտքուր, լեփ տպած (լավ կլինի ստղալի ջրով) լերիզով պինդ կապել, ապա նույն կերպ կապել նաև առաջնից մոտ մի

վերշոկ հեռավորությամբ դեպի ընկերքի կողմք՝
այդ լերկու կապերի արանքից կտրել պորտա-
լարը:

Կանոնավոր ընթացող ծննդաբերության ժամա-
նակ, զավակը դուրս գտլուց հետո, դուրս են
գտիս նաև նրա պատյանները (ընկերքը), վարով
և վերջանում ե ծննդաբերության դործողու-
թյունը:

ԱՆԿԱՆՈՆ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նախորդ դիմում ցուց տվինք զավակի այն
դիրքը, վոր նկատվում ե կանոնավոր ծննդաբե-
րության ժամանակ և շատ դեպքում հնարա-
վորությունն ե տալիս ծննդկան մորն իր իսկ
ուժերով, առանց կողմնակի միջամտության
ազատվելու:

Իսկ իեթե հենց իրեն՝ զավակի և կամ նրա
անդամների ուրիշ վորևե դիրքը, անպիսի պայման-
ներ են ստեղծում, վոր անասունն անկարող և
լինում իր ուժերով դուրս մղել զավակին և մար-
դու ոգնության կարիք ե զգում, այսպիսի դեպ-
քերում ծննդաբերությունը կոչվում ե ան-
կանոն:

Անկանոն դիրքը զանազան բնութիւննում,
վորոնց մասին կիսունք հետո իսկ այժմ ան-
հրաժեշտ ե մատնանշել անկանոն ծննդաբերու-

թյան ժամանակ ունություն հասցնելու ընդհա-
նուր միջոցները:

Վերահաս անկանոն ծննդաբերության նշան-
ներն են՝ չնայած սաղմնային պատրանների պա-
տըռվելուն, սաղմնային ջերերի հոսելուն և լեր-
կունքի նորմալ ուժերի դուրս դաշտան զավակը դուրս
չվ գտիս:

Հստ լերեսութիւն վորևե արգելք կա՝ կամ մտրմ-
նի և կամ անգաների զիրքերի անկանություն:
Հեշտոցի միջով կատարած հետազոտությունը
հաստատում ե արդ կտուկածը:

Այժմ բժշկի ինսդիրն այն ե, վոր զավակի
մտրմինը կամ անգաներն այնպիսի դրություն
մեջ դնի, վոր չխանգարի նրան կոնքի խոռոչից
ազատ կերպով դուրս զպու, վորովհետեւ հենց
արդարեղ ե առաջանում զավակի շարժվելու խո-
չընդուռը: Այլ խոսքով՝ բժիշկն իր գիտությունը
պետք ե հանդես բերի նրանով, վոր զավակին
այն դիրքը տա, ինչ դիրք վոր հատուկ ե նրան՝
կանոնավոր ծննդաբերության ժամանակ:

Այս աշխատանքը կատարելու համար ամենից
առաջ անհրաժեշտ ե սեղմած զավակը լետ հրել
նորից զավակատան խոռոչը, վորովհետեւ ուղղման
ամրող աշխատանքը հնարավոր կլինի կատարել
միայն զավակատան մեջ և վոչ թե այնպիսի
անհարմար, նեղ անցքում, ինչպիսին ե կոնքի

Եռուշը: Զավակի լեռ հրելը պետք եւ կատարե կամ ձեռքով, կամ հատուկ կեռերի ոգնությամբ, անպայման ցավերի ընդհատումների ժամանակ, իերք բացակայում են լերկունքի ցավերը, վորովհետև դրանք շատ են հակազդում զավակը ներս հրելու գործին: Այս գործողության ժամանակ անսառնին պետք եւ վորքի կանգնեցնել և հետութքը բարձրացնել, ծննդկանի այսպիսի դիրքը կհեշտացնի բժշկի աշխատանքները:

Յեթե զավակը ներս հրելուց տուաջ, հետազոտման ժամանակ շոշափելիս, լերեա այս կամ այն անդամի տռաջ մեջնված մասերը (զլուխը, վոտքերը), նրանց վրա պետք եւ հագցնել լերիզի կամ պարանի հանգուցներ, տինակեա, վոր լեռ հրելուց հետո մարմնի արդ մասը հեշտությամբ կարելի լինի ուղղել ծննդաբերական անցքերի մեջ: Յերբ զավակն ամբողջապես լեռ եւ գնում զավակատունը, սկսում են ուղղել նրա անդամների սխալ դիրքը, վորի ժամանակ արդ ծանր ու լերկարատն աշխատանքը թեթևացնելու համար, հանձնաբարվում եւ զավակատունը դու ջուր մտցնել:

Այս բանն առանձնապես ոգտակար և նույնիսկ անհրաժեշտ եւ լերկարատն ծննդաբերության ժամանակ, իերք սաղմնալին ջրերն արդեն վերջացած են լինում: Այդպիսի ջուր լցնելուց հետո

զավակատունը լայնանում եւ արնպես չի սեղմում զավակին, վորով և դարձնելն ու անդամներըն ուղղելը հեշտանում երժշկի համար: Յերբեմն մանավանդ զամբիկի նկատմամբ, զավակի անդամների սխալ դիրքը հեշտությամբ ուղղվում, իբրև ծննդկանին պառկեցնում են մեջքի վրա:

Մամնավորապես կարելի լի գիտել անդամների դիրքի անկանոնության հետևալ դեպքերն՝ տոջեր վառք երի նկատմամբ:

1) Վոտքերը, մեկը կամ լերկուն ել ծալված են լինում դաստակի մեջ:

2) Մեկ վոտը, կամ լերկուն ել ծալված են լինում փորի տակ:

Անդամների առաջին անկանոն դիրքն առանձնապես ավելի շատ են նկատվում, վորի ժամանակ զավակին դուրս հանելու համար անհրաժեշտ են նախապես ուղղել ծալված վոտքերը: Առանց ուղղելու զոռով դուրս հանելը մորը կարող է վտանգավոր վնասվածքներ պատճառել (զավակատուն պատռվելը): Յեկրորդ դեպքը, այսինքն լերք մեկ կամ լերկու վոտքն ել ծալված են լինում փորի տակ, համեմատաբար ավելի սակավ պատռակամ և նույնպես պահանջում են անպայման ուղղել, վորովհետև ալլագես ծննդաբերությունը աեղի չի ունենա, մանավանդ՝ լերք լերկու վոտքն ել ծալված են:

Յեթե զավակը մեռած ե, կամ այնքան ե սեղմած կոնքի մեջ, վոր վերջավորություններն ուղղելու հաւաք նոշից դեպի զավակատուն լետ հրելը չի հաջողվում, դիմում են հատուկ անդամահատության, այն ե՝ զավակը մաս մաս գուրս են հանում, մի բան, վոր կարող ե անել միայն անտանաբռուժը:

Հետի վատքերի նկատմամբ կարող են պատահել հետևյալ անկանոնությունները:

1) Մեկ կամ լերկու վատքերն ել ծալված են լինում ծնկներից:

2) Մեկ կամաւ լերկու վոտքն ե ծալված են լինում փորի տակ:

Առաջին դեպքում այսպես ե ուղղվում. բժիշկը սաստիկ ծռում ե վոտքը ծնկի հողի մոտ և միևնուն ժամանակ տանում դեպի վերև, ասկա ձեռքը հետզինետե ցած իջեցնելով վոտքի կոճի վրալով, բռնում ե սմբակն ու աշխատում ե բաց անել վոտքը կոնքի խոռոչում:

Այս աշխատանքները կթեթևանան, լեթե նախապես սմբակների հողի վրա լերիզի ողակ կապվի, վորպեսզի ողնականը լերիզը քաշելով, ոգնի բժշկին: Բացի ալդ, առաջարկվում ե այս գործողությունը կատարել՝ ծննդկանին մեջքի վրա պառկեցնելով:

Վոտների դիրքի ուղղումն անհնարին լինելու

դեպքում, դիմում են զավակին գուրս հանելու բռնի միջոցների՝ պարանի հանդուցի միջոցների, վոր գցում են ազդրի շուրջը կամ մեջքին. այս դեպքում դուրս հանելիս անհրաժեշտ ե ծոլված վոտքերը տանել զավակի վորի տակ:

Յերբ մեկ կամ լերկու վոտքը ծալված են փորի տակ, ուղղման գործն այսպես պետք է տարվի, վոր բժիշկը զավակի վոտքերը «իր կողմը» քաշելով, վոտքին այնպիսի դիրք տա, վոր ծնկից ծալված լինի և հետո վարվի այնպես, ինչպես ցուց տվինք նախորդ դեպքի ժամանակ:

Գլխի անկանոն դիրքը բավական հահախ ե նկատվում. կարելի լեռկատել՝ 1) կողքի 2) ծոճրակալին և 3) մեջքի ու գլխի (մեջքագլխալին) դիրքով ծնվելու դեպքեր:

Կողքի կողմից ծնվելու դեպքում, հեշտոցի միջոցով շոշափելիս, կնկատենք պարանոցը և լերկու վոտքերը, վորոնցից մեկը, հենց այն կողմինը, վորի վրա ծռվել ե գլուխը, տվելի առաջ ե ընկած լինում: Այլպիսի դիրքն ուղղելու համար նախ և առաջ հանդուց են գցում լերկու վոտքերին, հետո զավակը լետ են հրում զավակատունը, ուղղում են գլխի դիրքը և լետ բերում նորից կոնքի խոռոչն այնպես, վոր նա պառկած լինի առջելի վոտքերի վրա:

Ծոճրակալին դիրքի ժամանակ գլուխն ընկնում

Ցեթե զավակը մեռած ե, կամ ալնքան ե սեղ-
մված կոնքի մեջ, վոր վերջավորություններն
ուղղելու համար նորից դեպի զավակատուն լետ
հրեթ չի հաջողվում, դիմում են հատուկ անդա-
մահատության, այն ե՝ զավակը մաս մաս գուրս
են հանում, մի բան, վոր կարող ե անել միայն
անտանաբուժք:

Հետի վոտքերի նկատմամբ կարող են պատահել
հետևյալ անկանոնությունները:

1) Մեկ կամ լերկու վոտքերն ել ծալված են
լինում ծնկներից:

2) Մեկ կամ լերկու վոտքն ե ծալված են
լինում փորի տակ:

Առաջին դեպքում այսպես ե ուղղվում. բժիշկը
ստատիկ ծռում ե վոտքը ծնկի հողի մոտ և
միւսուն ժամանակ տանում դեպի վերև, առա
ձեռքը հետզհետե ցած իջեցնելով վոտքի կոճի
վրայով, բռնում ե սմբակն ու աշխատում ե բաց
անել վոտքը կոնքի խոռոչում:

Այս աշխատանքները կթեթևանան, լիթե նախա-
պես սմբակների հողի վրա լերիզի ողակ կապվի,
վորպեսզի ողնականը լերիզը քաշելով, ոգնի
բժշկին: Բայցի ալդ, առաջարկվում ե՝ այս
գործողությունը կատարել՝ ծննդկանին մեջքի
վրա պառկեցնելով:

Վատների դիրքի ուղղումն անհնարին լինելու

դեպքում, դիմում են զավակին գուրս հանելու
բռնի միջոցների՝ պարանի հանդուցի միջոցով,
վոր գցում են ազդրի շուրջը կամ մեջքին. այս
դեպքում դուրս հանելիս անհրաժեշտ ե ծալված
վոտքերը տանել զավակի փորի տակ:

Յերբ մեկ կամ լերկու վոտքը ծալված են
փորի տակ, ուղղման գործն այնպես պետք ե
տարվի, վոր բժիշկը զավակի վոտքերը «իր կողմը»
քաշելով, վոտքին այնպիսի դիրք տա, վոր ծնկից
ծալված լինի և հետո վարվի այնպես, ինչպես
ցուց տվինք նախորդ դեպքի ժամանակ:

Դիմի անկանոն դիրքը բավական հաճախ ե
նկատվում. կարելի լենկատել՝ 1) կողքի 2) ծռծ-
րակալին և 3) մեջքի ու գլխի (մեջքագլխալին)
դիրքով ծնկելու դեպքեր:

Կողքի կողմից ծնկելու դեպքում, հեշտոցի
միջոցով շոշափելիս, կնկատենք պարանցը և
լերկու վոտքերը, վորոնցից մեկը, հենց այն
կողմինը, վորի վրա ծռվել ե գլխիը, տվելի առաջ
ե ընկած լինում: Այդպիսի դիրքն ուղղելու համար
նախ և առաջ հանգույց են գցում լերկու վոտ-
քերին, հետո զավակը լետ են հրում զավակա-
տունը, ուղղում են գլխի դիրքը և լետ բերում
նորից կոնքի խոռոչն այնպես, վոր նա պառկած
լինի տոջեի վոտքերի վրա:

Ծռծրակալին դիրքի ժամանակ գլխին ընկնում

ե զոտների արանքն ու դեմ ե առնում ցալլոս-
կրիս։ Այս անկանոն դիրքը հեշտությամբ կարելի
է իմանալ՝ հեշտոցի միջից ձեռքով հետազոտելու
ժամանակ։ Ուղղումն այսպես ե կտտարվում. ձեռքը
տանում են զավակի մռութի ատկ և գլուխը վեր
են բարձրացնում տինակես, վորնա բռնի իր տեղը,
արխիքն ընկնի տոջնի վոտքերի վրա։

Յեթե զլուխը շատ ուժեղ ե դեմ տված ցալլ-
ոսկրի լեզերքին, անհրաժեշտ ե զավակը լետ
տանել դեպի զավակատան խոռոչը և ապա արդեն
ուղղել գլուխը. վոտների նախադաստակի վրա
նախապես հանգուց են զցում։

Մեջքազլիւային դիրքի ժամանակ զլուխը լետ
ե զցված լինում և ճակատը՝ ուղղված դեպի իր
մեջը, իսկ միջնուստային տարածությունը դեպի
զավակատան վերին պատի կողմը, վոտքերի դիրքն
ուղիղ ե լինում։ Նման դիրք շատ սակավ ե
պատճենում. այս դիրքն ուղղելու համար պետք ե
զավակը լետ հրել զավակատանն ու զլուխն
ուղղեր։

Զավակի դիրքի անկանոնության դեպքեր հա-
մեմտաբար քիչ են պատահում, քան անդամնե-
րի տնկանոնության դեպքեր։ Զավակը կարող ե
գտնվել՝ 1) զավակատան մեջ՝ ընդլանական դիր-
քով, ըստ վորում նրա մեջն ուղղած ե լինում
կամ դեպի դրսի անցքը, կամ հակառակ կողմը,

2) ուղղահալաց դիրքով և վերջապես 3) անպիսի
դիրքով, իերբ նրա մեջքը դարձած ե լինում մոր
վորովանի պատի կողմը (ներքին դիրքավո-
րում.)

Զավակի դիրքի մեր մտանանշած բոլոր ան-
կանոնությունները վերաբերվում են դժվար ուղ-
ղվող դեպքերին և մեծ մասամբ պահանջում են
ոպերացիալի դիմել։

ԱՆԱՍԻԿԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Ծննդաբերությունը վերջանալուց հետո ան-
հրաժեշտ ե ցուց տայ հատուկ ուշադրություն
կենդանու պահպանման, խնամքին, կերակրման,
ինչպես նաև հետեւելնրա առողջական դրությանը,
վորպազի լուր ժամանակին նկատվի հիվանդության
սկիզբը, վորովինեաև ծննդաբերությունից հետո
սկիզբը, վորովինիսկ ծննդաբերության կանո-
ցատ հաճախ, նույնիսկ ծննդաբերության կանո-
ցատ նախական գործաբանների. հիվանդություններ,
սեռական գործաբանների, հանգստություններ։

Ծննդաբերությունից անմիջապես հետո արտա-
թորանքով (աղբ) և սաղմնային ջրով կեղտոտված
ցածքաբը՝ ընկերքի հետ միասին, իմթե այդ
արդեն գուրք ե լեկել, հանգում ե շնորհից և թաղ-

վում հողի մեջ. կենդանու տակ փռվում ե առաս
և թարմ ցածքար:

Ծննդկանի ամբողջ մարմինը շփվում ե ծղոտի
խրձիկով՝ կեղալ և քրտինքը սրբելու համար և
հետո տրորվում ե (պոտիվում ե) 10 — 15 րոպե,
կաշվի գործունելու թրունը զրգուելու նպատակով՝
գրանով արլունը ներքին գործարաններից քաշելով:

Մրսելուց խուսափելու համար ոգատկար և
նույնպես մարմինը ծածկել մի տաք բանով,
մանավանդ տարվա ցուրտ ժամանակը, վատ
սարքած շներքում:

Ծննդաբերությունը վերջանալուց հետո մայրը,
ծննդաբերության ժամանակ կրած տառապանք-
ներից հետո՝ սկզբում ախքան ռւժապառ ելինում
և թուլանում, վոր տուաջին ժամանակը վոչ մի
տխորժակ չի ունենում, այլ խիստ ծարավություն
ե զգում, վոր անցկացնելու համար տրվում ե
ջուր՝ սենյակի տաքության, բայց վոչ պաղ:

Յեթե ծննդաբերությունը վերջացել ե բարե.
հաջող, դուրս են յեկել ստղմի բոլոր թաղանթները,
այդ դեպքում կամաց կամաց ծննդկանի տխորժակը
բացվում ե՝ ծննդկանն աշխատանում և յերեան
ե գալիս հոգատարություն և սեր դեպի զավակը:
Հակառակ դեպքում ախորժակը կամ պակասում
ե և կամ բոլորովին չքանում: Նքոցները շարու-
նակվում են շատ կամ քիչ ուժքնությար և հաճա-

խոկանությամբ: Սեռական ձեղքից գոլիս ե
կեղտուա ծորանք՝ անախորժ հոտով, յերեան
նկատվում են սաղմի դուրս չեկած պտտաւաները:
Կաթը գալիս ե աննշան քանակով և այնքան
վատորակ, վոր տառաջացնում ե զավակի հիվան-
դություն: Կենդանին իրան դզում ե ընկնված:
Ճերմաշափը ցուց ե տալիս բարձր ջերմ: Այս
բոլոր յերեսությները գալիս են ասելու, վոր ծննդ-
կանը հիվանդացել ե: և ինչքան շուտ պարզվի
հիվանդության երությունը և ցուց արվի համա-
պատասխան ողնություն, այնքան ավելի մեծ
հույս կինի բարեհաջող վախճանի համար:

ՀԵՏ-ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ

Այն ծննդաբերությունը, վորը բարեհաջող
կերպով ե վերջանում դավակի աշխար գալով,
միշտ ել բարեհաջող չի լինում մոր համար: Համախ,
մանավանդ կովերի մեջ, հետձննդաբերության
շրջանում նկատվում են այս կոմ այն, թե տե-
ղական և թե ընդհանուր բնութիւն կրող հիվանդ-
ություններ: Այդ հիվանդություններից նորի և
առաջ հարկավոր ե մատնանշել:

1) ընկերի մնալը:

Այս հիվանդության եռթյունն այն ե, վոր
ստղմավին պատասխաները բավականի յերկար ժա-

մանակ դուրս չեն դալիս զավակատնից և զավակը
դուրս դալուց հետո հանդիսանալով, մեռյալ
հյուսվածք, աշնաբեղ լինթարկվում են նեխման,
վորի արտադրանքն ամենից առաջ գրդում ե
արդանդը, առաջ ե բերում բորբոքում, իսկ
հետագալում կարող ե անցնել մոր արյան մեջ և
բավականի լուրջ հիվանդության պատճառ դառ
նալ, այն ե՝ արյան թարախու վարակման, վոր
հաճախ վերջանում ե մահով:

Սովորաբար ընկերքը դուրս ե դալիս զավակի
հետո միասին, կտմ ծնելուց մի քիչ հետո, ըստ
վորում լեղջուրավոր անասունների համար նոր
մալ ե համարվում, լեթե ընկերքը մի 6—7 ժամ
ուշ ե դուրս գալիս: Այդ ժամանակին անցնելուց
հետո ընկերքի դուրս չեալն արդեն պահանջում
է հետևել ծննդկանին, վորպեսզի իր ժամանակին
միջոցներ ձեռք առնվեն՝ ընկերքը դուրս հանելու
համար: Ամենից հաճախ ընկերքի դուրս չեալը
նկատվում ե լեղջուրավոր անասունների մեջ:
Զիերի մեջ այդ լերկութը համեմատաբար սակավ
ե տեղի ունենում, բայց հետևանքը մտհացու յե
լինում:

Ահա թե ինչու ձիերի մեջ ընկերքը դուրս
չեալու դեպքում, անհրաժեշտ ե շտապ կերպով
միջոցներ ձեռք առնել դուրս հանելու համար,
այն ինչ լեղջուրավոր անասունների ալդուիսի

գործողության համար չեն շտապում, նրանց
ընկերքի նույնիսկ 2—3 որով դուրք չգում չե
ազդում անասունի արտադրության վրա:

Ընկերքի մալու պատճառներն են՝ 1) ընկերքի
անորմալ ուժեղ կերպով զավակատանը կպած
լինելը, մանափանդ կովերի՝ զավակատան թթիկ-
ների միջոցով, ապա 2) վատ կերակրելու, կամ
չտփազանց լերկար ու ծանր ծննդաբերության
հետևանքով ուժասպառ անասունի զավակատան
պատճերի թուլլ կծկումները ծննդաբերության
ժուռ վատկելը և այլն:

Ընկերքի մասլը կարելի լե նկատել լերկու
կերպ:

1) Յերբ պատճանները մասամբ անքան են
դուրս լեկել զավակատնից, վոր փոկի նման կտս
են ընկած լինում սեռական ճեղքից, լերբեմ
նույն իսկ համանում են գետին:

2) Դուրս չեկող ընկերքն արատքինից վոչ մի
կերպ չի նկատվում, վորովինետև ամբողջապես
մատցած ե լինում զավակատան մեջ: Այս վերջին
գեղքը սպեկի սակավ ե նկտավում, բայց իր
հետևանքով ավելի ևս վտանգավոր ե մոր համար:

Հիվանդության նշաները՝ ներսը մատցած և
մասամբ դուրս լեկած ընկերքը մի 2—3 որից
հետո սկսում ե նեխմա: Պարբերաբար կրկնող

Նքոցների ժամանակ հեշտոցից դուրս եւ գտլիս
կեղառոտ մուգ դույնի գարշահոտ հեղուկ՝ քայլար-
ված պատրամնների կտորներով։ Հեշտոցի և ար-
դանդի լորձաթաղանթները սաստիկ կարմրում են
ու ծածկվում մոխրագույն փառով, կաթը կամաց
կամաց նվազում եւ ու դաշտարում, մարմնի ջերմ-
առությանը բարձր ել լինում։

Յեթե ընկերքն ամբողջապես եմնացած լինում
զավակատանը, ապա ծննդաբերությունից 3 որ
հետո զավակատան պարանոցի կծկվելու հետևան-
քով կարող են այնպիսի պայմաններ ստեղծվել,
վոր, նույնիսկ ուժեղ նքոցներ լինելով հանդերձ,
պատրամնները դուրս չգան։

Իսկ ընկերքի նեխումն տուած եւ բերում արլան
թարախոտ վարակում և մտհ։

Ընկերքը դուրս չդալու դեպքում բժշկությունը
լինում ե՝ կամ 1) սպասողական միջոցը, լերը
հույս կա, թե կենդանին իր մարմնի սեփական
ուժով ընկերքը դուրս կհանի, կամ 2) դործո-
ղության դիմելը, վորի ժամանակ բժիշկն ինքը
ընկերքը կհանի դուրս։

Սպասողական բժշկումն այն ժամանակ են
կիրառում, լերը ընկերքը մասամբ դուրս ե
լեկոծ լինում զավակատնից և լերը դրա հետ
միասին անտառան ուժապատճեն չի լիղել։

Զավակատառն ընկերքից շուտով ապատվելու

համար մարմնի դործազրած ուժին ողնելու նպա-
տակով՝ արվում են վորոշ դեղեր, վորոնք նպաս-
տում են զավակատան պատերի կծկումներն
ավելի ուժեղ կատարվելուն։ Արխակ՝ տալիս են
զլուր (СПОРЫНЬЯ),

Ի դեպ, այսուեղ հարկավոր ե մտանանշել ըկերքը
հեռանալու համար համախ գործադրվել մի վտան-
գավոր միջոց, այն ե, լերը ամոթուլքի ճեղքից
դուրս լեկած ընկերքից ծանրությունները (աղ-
յուս, քար) են կապում, հուսալով, թե այս ծան-
րությունները կողնեն ընկերքին, զավակատան
պատրամնից պոկվելու Անհրաժեշտ ե խուսափել
այդպիսի միջոցից, վորովհետև քանի ընկերքը
զավակատան պարանոցով անցնում ե, վերջինս
կշարունակի բաց մնալ մինչև պատրամների լրիվ
դուրս գալը։ Բայց լեթե ընկերքը կարվի զավա-
կատան պարանոցի անցքի մոտ, ինչպես շատ
անգամ տեղի լին ունենում՝ անհարմար ծանրու-
թյան ընարելու հետևանքով, կամ լերը անասունը
պատահմամբ վոտը դնում ե դրա վրա, այդ ժա-
մանակ պարանոցը կփակվի և զավակատան մեջ
մնացած ընկերքի մասը կենթարկվի նեխման և
առած կրերի մոր համար ամեն տեսակի վտան-
գավոր հետեւանքներ։

Ընկերքի դուրս գալն շտապեցնելու համար,
կրելի լի զավակատառնը լիմանալ կրեօլինի գաղջ

լուծութով, վոր ռաժեղացնում և նրա պատերի
կծկումները:

Ընկերքը ձեռքով դուրս բերելու յերկորդ
միջոցը կիրառում են այն գեպօւմ, յերբ վատահ
չեն՝ ծանր ծննդաբերութիւնից, կամ վատ էե-
րտկրվելուց ռաժապառ լեղած անտառնի ուժերի
վրա և կամ յերբ ընկերքն ամբողջապես մնացած
ել լինում ներսը.

Վերջին գեպօւմ պետք ե շտապեցնել գործո-
դությունը և ծեւելուց մի որից տվելի չուշացներ:
Մաքուր լվացված, յեղունգները կարճ կտրած և
վազելինով ոծած ձեռքը մտցնում են զավակատան
դեռևս բաց մնացած պարանոցի մեջ և գտնելով
այնտեղ ընկերքի պատյանները, մտաների թեթև
սեղմումով այդ պատյանները պոկում են լորձա-
թաղանթից: Զիերի համար այդ պոկելը կտատր-
վում և զավակատան լորձաթաղանթի տմբողջ
մակերեսի վրա, իսկ վորոնող անտառների մոտ՝
միայն ընկերքի բռնած տեղերից:

Ընկերքը հեռացնելու գործողությունը մեծ
համբերություն և պահանջվում, վորովնետն խիստ
և արտգ միջոցներով, ուրիշ խոսքով ընկերքը
բաժանելու փոխարեն՝ փրցնելով, կարելի յե-
զավակատան պատերին լուրջ վնասվածքներ
հասցնել, վորից առաջ կդառնութեղ արրանահոսու-
թյուն: Դործողությունը վերջացնելուց հետո,

շատ լուգ կլինի, վոր զավակատունը լվացվի կբե-
ռինի գաղջ թուլլ լուծութով:

ՀԱՎԱԿԱՏԱՆ ԴՐԻՄԸ ԸՆԿՆԵԼԲ

Այս հիշանդությունը նկատվում է կամ ծննդա-
բերությունից անմիջապես հետո, կամ դրանից
մի քիչ հետո, քանի ոեւ զավակատուն պարանոցը
լայն և բացված: Հիշանդության պատճառը միշտ
ել չի կարելի վորոշել: Շատ գեպքերում զավա-
կատան դուրս ընկնելը կախված ե ընկերքի՝
չտփագունց ամուր կերպով իր լորձունաթաղանթի
կամ վորոճող անտառների զավակատան թիթիկ-
ներին կպած լինելուց, վորոնց լեզ: անտառն-
երի մեջ և ամենից հաճախ նկատվում ե արդ
հիշանդությունը: Առա նկատվում ե զավակատան
կապերի թուլացման, անտառնը դիրքով գեպի
լիու թեքված լինելու, ծննդաբերությունից հետո
դուրս չեկած ընկերքին մեծ ծանրություններ
կապելու և վերջապես այդ հավանդությանը
կենդանին հատուկ, բնածին կերպով տրամադիր
լինելու հետևանքով:

Դուրս ընկած զավակատունը կախված ե լի-
նում սեռական ձեղքից, կարմրագույն մեծ ու-
ռուցքինմատն (կովերինը ծածկված ե լինում լիթիկ-
ներով, իսկ խոզերինն ունենում ե յերկար՝
աղիքների հանդուցի ձև), միզափամփուշն ու

մեզանցքը կուչ են գտիս և առաջ են բերում
միզկապություն (շնորհայ),

Վորքան կարելի է, պետք ե շուտ ուղղել զա-
վակատունը, այդ ժամանակ կենդանին կանդնած
դրության մեջ պետք ե լինի. Դուրս ընկած զա-
վակատունը պետք ե ազատել ընկերքից, յեթե
այդ դեռ պոկված չե, խնամքով պետք ե մաքըել
վրան կզած կեղաերից, նախ բիտակ սառը ջրով
և ապա շիպի ստոր լուծությով ($1 - 2^{\circ}$), Ածա-
նելիք և ընդհանրապես ճարպերով ոծել խորհուրդ
չի արվում, վորովնետե այդ կղժվարացնի զավա-
կատունն ուղղելու գործը:

Զավակատունը պետք ե ուղղել այսպես. մաքըրած
զավակատունը պետք ե փոխաթել մաքուր յե-
րեսուրբիչով, ոգնականի միջոցով սեռական ճեղք-
վածքից մի քիչ վերև բարձրացնել և զավակա-
տունը ուղղողը ձեռքով սեղմելով՝ դուրս ընկած
մասի հիմքը, պետք ե աշխատի ներս հրելով
գցել իր աեղը:

Այս բավականին դժվար և հոգնեցուցիչ աշխա-
տանքի ժամանակ անասունն անզիտակցաբար
սաստիկ դիմադրություն ցույց կտա, իր ուժերը
լարելով, վոր կարելի է վերացնել գործողության
ժամանակ կամ վոտները կապելով և անասունին
մեջքի վրա պտուիցնելով և կամ անասնաբուժի
կարգադրությանը դեղեր խմեցնելով:

Ուղղված զավակատունը կտրող ե նորից հեշ-
տությամբ դուրս ընկնել. այդ կանխելու համար
սեռական անցքը 2 — 3 տեղով կտրում են և
հիվանդին գոմում ախաղես են կանգնեցնում, վոր
հետուրքն առջևից բարձր լինի. Մի քանի որ
հետո, իրը անտառունը զգալի կերպով հանգստցած
ե լինում, կարերը քանդում են:

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԿԱԹՎԱՄ

Այս հիվանդությունը գլխավորապես նկատվում
է կովերի և նուռնպես խովերի մեջ, ծննդաբերու-
թյունից անմիջապես հետո, ըստ վորում առաջին
անգամ ծնողները լերեկ չեն հիվանդանում տայ
հիվանդությանը. Այս հիվանդության եռթրունն
ե՝ ուղեղի հանկարծակի ստկավարունությունը,
վորին հետևում ե բոլոր շարժողական գործարան-
ների կաթվածը (կուլ տալու, կղկղանքի, մեղի
արտադրության, շարժողության) և ընկճված,
քնկոտ, անզդա զրություն. Պատճառները ճշտիվ
դեռ չեն վորոշված:

Նշանները. այս հիվանդությունը մեծ մտամբ
ծննդաբերությունը հաջող վերջանալուց հետո
հանկարծակի, անսպասելի կերպով ե վրա հաս-
նում: Կովերի մեջ աչքի լե ընկնում քնկոտ գրու-
թյուն, ախորժակի կորուստ և վորոճալու բա-
ցակալություն: Առաջ ե գտլիս հետուքի թուլու-

թլուն, կենդանին շարժման ժամանակ որորվում է, վերջապես վալը և ընկնում և վերև բարձրանալու փորձեր եւ անում, բայց չի կարողանում, Ապա առաջ եւ գալիս զիտակցութիւն և զգացողութիւն թուլացում և արև եւ այնքան սաստիկ, վոր մարմնի ամենազգացուն մասերը (ամբակի պսակը) քորոցով ծակելիս կովը բոլորովին չի զգում:

Հիվանդը սովորաբար պառկում եւ աջ կողմի վրա, վոտքերը մեկնած և գուշը մի կողմ ծուած: Բերանից դուրս եւ գալիս թուք, լեզուն կախ և ընկնում և անսասւնը չի կարողանում ներս քաշել (կաթված): Կոպերը կիսախուփ են, աչքի թաղանթները՝ չոր, փայլը կորցրած և անթափանց:

Շարունակ զարգացող կաթվածի հետևանքով կուլ տալը նախ դժվարանում եւ ապա անհնարին եւ դառնում:

Կղկղանքի և մեզի արտադրությունը դժվարանում եւ կամ դտղաբում: Առանձնապես ընորոշ և այս հիվանդութիւնն ժամանակ մարմնի ջերմութիւնն աստիճանի իջնելը, ուղիղ աղիքի մեջ դրած ջերմաչափը ցույց եւ տալիս 34 — 35 °: Ականջները, լեզուրների արմատները և վոտքերը շոշափելիս սառն են լինում: Յեթե շրջակի, 2 — 3 որից հետո հիվանդը ստուկում եւ տուղջանալու դեպքեր ստկավ են պատահում:

Այս հիվանդութիւնն ժամանակ մեծ հաջողու-

թյամբ կիրառում եւ անամեսքուժ Եվերսի առաջարկած միջոցը — հատուկ հարմարեցրած գործիքի միջոցով պտուկներով ծծերի մեջ ոդ (կամ թթվածին) ներս փչելը ալիպիսի գործիքներ չունենալու դեպքում կարելի լի ոգտվել հեծանիվի ողամուղ գործիքով (նասոս), Յերբ ոդ փչելուց 6 — 10 ժամ հետո կովը վեր չկենա տեղից, կարելի լի կրկնել ալդ գործողությունը (ոդ ներս փչելը), վարպեսզի ծծերից ոդը շուտով դուրս չգա, ոդ փչելուց հետո լերիգով կապում են լուրաքանչյուր պտուկի տրմատը:

Բացի ոդ ներս փչելուց, հարկավոր եւ ուշադրություն դարձնել ստամոքսի, աղիքների գործունելու բան և միզանոսութիւնն վրա: Փորկապությունը պետք բժշկել հոգնալով (կլիզմա) և ձեռքով հեռացնելով կղկղանքի պնդացած մասերը (լուծողական չտալ). մեզը դուրս բերել կատերով:

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԶԵՐՄԱԽՏԸ

Այս հիվանդությունն առաջ եւ գալիս ներսը մնացած ընկերքը կտմ արգանդում մեռած ստղմի նեխումից առաջացած նյութերը՝ անասունի արյան հետ խառնվելու հետևանքով, ինչպես նաև կեղասու ձեռքերի ու գործիքների միջոցով: Շատ

հաճախ նեխած արտաթորություններով վարակված ցամքաբն ել կարող ե ալդ վարակը տանել սեռական գործարանները, մասնավանդ զավակատան կտմ հեշտոցի գուրս ընկնելու ժամանակ:

Սովորաբար հիվանդության նշանները յերկում են 2—4-րդ որբա Մարմնի ջերմաստիճանը հասնում է մինչև $40,5^{\circ}$ և նույնիսկ $41,5^{\circ}$, ախորժակ չի լինում, կովը չի վարում, կաթ չի տալիս: Սեռական արտաքին գործարաններն ուռշում են, նրանցից գարշահոտ ե գալիս, մուգ կեղաստ լրածունք: Շուտ-շուտ միզում ե: Տրամադրությունը ճնշված ե լինում: Զիերն արս հիվանդության ժամանակ սովորաբար վոտի վրա լեն մնում, իսկ կովերը պառկում են: Շատ քիչ ե պատահում, վոր առողջանան:

Բժշկությունը նախ և առաջ անհրաժեշտ ե զավակատունն ազատել ընկերքից, կտմ մեռած զավակից: Ապա լվանալ զավակատունն որական 2 անգամ կրեոլինի գաղջ լուծութով: Խմելու համար տալ տաքությունն իջեցնող դեղեր:

Այս վտանգավոր հիվանդությունը կանխելու համար անհրաժեշտ ե խստիվ հետևել գործողություն կատարելու ժամանակ ձեռքերի ու գործիքների մաքրությանը նույն հսկել ծննդկանին պեղափորած շենքի մաքրությանը:

ՄԱՆԴԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՊԱՌԿԵԼԸ

Կովերի հաճախակի հիվանդություններից մեկն ել ծննդաբերությունից հետո պառկելն ե, վորի ելությունն ե հետույքի թեթև պարալիչը, վորպես հետևանք ծննդանին ոզնելու ժամանակ մանկաբարձական անհմուտ, կոպիտ ոգնություն ցուց առաջ տուջացած սեռական տնցքերի մնասվածքների, կոնքի վասկրների ջարդվածքի և կոնքի խոռոչի նյարդերի վնասանելուն: Շատ անգամ այս հիվանդության պատճառը լինում ե արյան մակրնթացաւթյունը դեպի վողնուղեղը, մանավանդ լավ չաղացրած, լիտրուն կենդանիների մեջ:

Հիվանդության նշանները կենդանին չի կարողնում վոտքի կանգնել: Ախորժակը, վորոճալն ու մարմի ջերմաստիճանը նորմալ են լինում: Հիվանդության տեղևազությունն ու հետեանքը տարբեր են լինում կամ 4—5 որից հետո հետզհետե լավանում ե և կովը վոտքի լե կանգնում ու տառողջանում, կամ պառկելը տեսնում ե 6—7 որից ավելի, ալդ դեպքում պետք ե լենթադեր, վոր անբարեհաջող լելք ե ունենալու—զարգանում են պառկելուց առաջացած վերքերը (պառկելախցեր), աղիքների բորբոքում և անասունը կարսդ ե սատկել հլուծվելուց:

Բժշկությունը հիվանդին արամադը մաքուր

և առատ ցամքար. մեջքն ու գոտկատեղը
տըորել գրգորիչ նլութերով (սկիպիոնար, կամֆորի
սպիրտ ալյն). առաջ դլուրամարս, վոչ շատ առատ
կեր. հետեւել աղիքների գործունելությանը.
փորկապության ժամանակ հոգնա (կլիզմա)
անել:

Խորհուրդ և արվում գործադրել նաև կուրծի
մեջ ոդ փշելու միջոցը, յեթե հիվանդության
պատճառը կոնքի ջարդվածքն ու հողերի ձգվելը
չհն:



<<Ազգային գրադարան



NL0267997

8 808

Դիմք 30 կ.

